



92. ԹԱ ՀՈՒՆՑ ՄՈՒԼԱՆ ՔՅԻՆԱՅ ԷՆ ԴՈՒՆՅԱՆ, ՆՏ ԵԿԱՎ

Մուլա-Մանսրահին (Նասրեդինը) քիչնամ ա ծմակը փեղ ընե-
լի։ Եր ա իննամ ծառը, վեր փեղ անե։ Ըսկսում ա ներքեից կտրելը։
Մին մարթ հղըցավը քիչնամ ար։ Տեսավ, վեր Մուլա-Մանսրա-
դինը հերանից քաշիցն ա կըտրում, ասում ա.—Ա՛յ մարթ, եթե
քաշիցն ըս կտրում, տու վեր ըս ինգյիլու, վնասվես։ Տա պաղաս-
խանում ա, ասում ա.—Խե՛ բիդի վեր ինգյնիմ ծառից, էն ըմ ծա-
ռին յիրան։ Ծառը կտրում ա, լիհն փշ ա մնամ, պարան ա կյամ,
ինքյն էլ վեր ինգյնիմ տակը։ Տա մտածում ա, ասում ա.—էս
մարթը իմաստուն ա, վեր գյիղանց թա էս ծառան վեր ըմ ինգյիլն-
կան։ Վազ ա տամ տրա հետան, ասում ա.—Ա՛յ մարթ, վեր տու տի
իմաստուն ըս, ասե տեսնամ ես հի՞ր ըմ մըռնըլական։ Տա բաղաս-
խանում ա, ասում ա.—Ես իմաստուն չըմ, հու չի՞ գյնդում, վեր
ծառը տական կտրում ըս, պարան ա կյանլու Ախրը վեր տա տրա-
նա ծեռք չի կտրում, տա ասում ա.—Քանի է՞շ ըս պերալ, վեր փեղ
անես։ Տա բաղասխանում ա, վեր օխտը էշ ա պերալ։ Ասում ա.—
Երբ վեր էշերըտ պեռնես, էն ա դիթյ կա, էն դիթյավը քիչնալիս
եթե էշերին բուլբուլ քըմական քամի տոնս կյամ, էն վախտը քու
մահըտ ա։

Տա վրեր հղե յա իննամ, դիթյավը քիչնալիս վախտը էշերն ըսկը-
սում ըն պեց թողելը, գյնդում ա թա արտեն ուրան մահն ա, նի յա
մննում մին ըղվեսու ծակ, կյնկերը կյամ ըն, ըսկսում տրա էշերն
օտելը։ Նշում ա, տեսնում, վեր կյնկերն իշերեն օտում ըն, ասում
ա.—Վա՛յ, Մուլա-Մանսրահինը սաղ ինի, կյնկերն իշերեն օտե՞ն։

Մին շորս օր, հինգյ օր մնամ ա փոսումը, շանսըդ ա տընու-
նում, եշում ա տընսնում մին քյարվան, ճորեքյը նան էշերը պեռ-
նած, ճանապարավը քյինամ ըն: Կլֆիը էտ ծակից հանում ա,
եշում ա տընսնում թա տա հի՞նչ քյարվան ա: Տեղ ճորենեն նան
ծիյանը խրթնում ըն, պեռները վեր ածում: էտ մարթուցան մինն
ասում ա.—Ա՛րա, էս հինչ պըտահե՞ց, վեր ճորենեն նան ծիյանը
խրթնեցեն, պեռները վեր ըծեցեն: Տրանց հնգյիընեից մինն աս-
ում ա.—Ընդեղան մին կյուլոթա տո՛ւս եկը տեմաց, ճորենեն նրա-
նա խրթնեցին: Հավաքվեցին տեղ, աղվեսին ծական մուլլեն տո՛ւս
կալին: Ըսկսեցեն մին լնվ թակելը: Դե քանի օր ա հնլն ինդլած,
տեղ սոված, մինգյիլ լնվ թակելը: Դե քանի օր ա հնլն ինդլած,
ա ուրանց կյուղը: Տեղ ուրան հըրվաները ասում ըն.—Մուլլա
քանի՞ օր ա իրեում չըս, հիշտեղ ը՞ս իլալ: Մուլլան ասում ա.—էն
դունյա յըմ իլնլ է՞, մեռած, էն ըմ իլնլ էն դունյա: Ասում ըն.—էն
դունյա հինչ կա՞, հինչ ը՞ս տեսալ էն դունյից: Մուլլան ասում ա.—
էն դունյա հեշ քյափուռը ճորե լի խըրթնըցեն, շատ ըն թակում
նրա համար:

